ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. փոստ odzun@bk.ru

թիվ 278-13
«17» 12 2013 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 59-ից N 62 որոշումները:

Առդիր՝ վեց թերթ:

23.12.2013

X

Օձուն համայնքի ղեկավար ***Ա. Տիգրանյան***

Կատարող՝ Վ. Տիգրանյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2013 թվականի N 59-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի տասներեքերորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ.

2) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՍՈՒՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 17
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2013 թվականի N 60-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և 55-րդ և 56-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 17
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 60-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

1. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների (հատված 1):

2. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման (հատված 2):

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման (հատված 3):

4. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների հավելուրդը կամ դեֆիցիտը (հատված 4):

5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (հատված 5):

6. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման (հատված 6):

7. Ծախսերի ֆինանսավորումը կատարել ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

8. "ՀՀ Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարին թույլատրել կատարելու ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ:

9. Սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կատարել համայնքի ղեկավարի կարգադրությունների համաձայան և կանխիկ դրամի վճարումը կատարել գյուղապետարանի դրամարկղի միջոցով:

10. Կրթության բնագավառում. ուսանողների ուսման վարձերի փոխանցումները կատարել համայնքի ղեկավարի կարգադրությունների համաձայան և կանխիկ դրամի վճարումը կատարել գյուղապետարանի դրամարկղի միջոցով:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2013 թվականի N 61-Ն

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի, երրորդ կետի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Կատարել փոփոխություն Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 58-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 17
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի դեկտեմբերի 17-ի N 61-Ն որոշման

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 58-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կատարել փոփոխություն Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 58-Ն որոշման մեջ.

1) Որոշման հավելվածի առաջին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր (7.500) ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար (15.000) ՀՀ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար (25.000) ՀՀ դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսունհինգ հազար (35.000) ՀՀ դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար (50.000) ՀՀ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր (1.500) ՀՀ դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր (2.500) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10
Հեռ. (0253) 6-16-62, Էլ. Փոստ odzun@bk.ru

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2013 թվականի N 62-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՍՈՒՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 – րդ հոդվածի 3 – րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման.

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Օձուն համայնքի բնակիչ Սասուն Սերյոժայի Աբովյանին (հասցե գ. Օձուն, փողոց 4, նրբանցք 2, տուն 12, ՀՎՀՀ 13613205) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի գույքահարկի վեց տարվա ապառքից՝ քառասունմեկ հազար չորս հարյուր (41.000) ՀՀ դրամ գումարի չափով և տույժից տասնինը հազար հիսունվեց (19.056) ՀՀ դրամ գումարի չափով, ընդամենը՝ վաթսուն հազար չորս հարյուր հիսունվեց (60.456) ՀՀ դրամ:

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Ս. Աբովյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

2013թ., դեկտեմբերի 17
Գ. Օձուն